

ժէքը իւր ընդհանուր մատենախօսական գնահատութեամբ որոշուած է, իսկ առանձին կէտերի ուղիղ կամ սխալ և նոր կամ յայտնի լինելը կնկատի ամեն մի ուսումնասիրող: Բայց իմ գնահատութեան շատ նկատողութեանց մէջ նա դժգոհուած է մի երկուսից միայն. նախ որ նկատել եմ թէ զքննութեան նախապատրաստութիւնը Հ. Ստեփանէի թարգմանութեան յառաջաբանով է, և ուրանում է թէ ինքը այդպիսի բան ասած չունի. թող ապա կարգայ. «Այս անյաջող թարգմանութիւնից, բայց և սիրուն և հարուստ առաջաբանից և ծանօթութիւններից տեղեկացել եմ ուրիշների սրբագրութիւնները, կարծիքները և բացատրութիւնները (ըին)»: Եւ թէ որքան է հասկացել ուրիշների ասածները, պարզ նկատուած է նաև այս անգամ, վասն զի «վերաբանութեան» խնդիրը տեղի խնդիր է համարուած և չէ հասկանուած, որ իմաստը գտնելու համար են տեղափոխել այդ բառը:

Նախապատրաստութիւնը ակնարկելուց յետոյ յիշել էի այն ոգին, որով առաջնորդուած է հեղինակը և նկատել, որ ճշմարտասիրութեան համար պէտք է լինի այդ ոգին և ոչ խղճի կամ շահի տեսակէտով: Իսկ խղճի կամ շահի տեսակէտն, որ երկրորդն է և հեղինակը ուրանում է, ահա—էջ 71. ծան. տող 7. ներքևից. «Ես (հ. հեղինակը) յաւելացրի. Խորենացուն փոխարինող ուրիշ պատմութիւն չունինք դոնէ, ցանկալի էր որ մերոնք ձեռնհաս մարդիկդ դեռ աշխատէիք ի նպաստ Խորենացու»:

Հ. Հեղինակը «տգեղ» է համարուած այս «ակնարկը», բայց ինչո՞ւ տգեղ համարել ակնարկը և ոչ ակնարկեալը:

Վերջապէս հ. հեղինակը երկիւղ է կրում որ իւր ընթերցողները «աննպաստ կարծիք» կստանան այդ ամենից. բայց առանց այդ էլ դժուար թէ մի ընթերցողի կարողանայ ներշնչել իւր գրուածքի մասին իւր ունեցած կարծիքը: Խոնարհութիւն ընթերցողի առաջ!!! Խոնարհութիւնը այնքան մեծ զարգարանք է, որքան բարձր է խոնարհուողը:

Ա. Տէր-Միքէլեան

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԺԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

Առաջիկայ 1901 թուին լրանում է Հայոց լուսաւորութեան

կամ ս. Էջմիածնի շինութեան հազար վեցհարիւրամեակը, ուստի և այդ առիթով «Լուսա» ի ներկայ համարում տպում ենք մեր հոգևոց լուսատուի և երանելի Հօր ս. Գրիգոր Լուսաւորչի կենսագրական մի տեսութիւն ՝ Ս. Էջմիածնի տասնեւվեցերորդ դարադարձը՝ վերնագրով, որ ուղարկուած է մեզ Կ. Պօլսի մի բարձրաստիճան և գիտնական եկեղեցականի կողմից:

«Լուս» նուիրողներ: Բարձր. Կ. Կորիւն վարդապետը մի օրնուիրեց Սևանի վանքի մենաստանին:

Մեծ. պ. Գրիգոր Թումանեանցը մի օր. նուիրեց Թաւրիզի հայոց Հայկազեան-Թամարեան ուսումնարանին:

ԽՐԱԿՐՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՄԱՆՆԵՐ

- „ՊԱՉՄԱՎՆՊ“ի խմբ. Մայիսի Համարը շեհը ստացել:
- „ՄԱՍՈՄ“ին. Չեհը ստացել Թ. 1, 18:
- „ՔՆԻՐԱԿՆ“ին. Չեհը ստացել Թ. 6:
- „ԱՆԱՆՏՏ“ին. Բ. տարուայ միայն յունուար և փետրուար ամիսներէ տետրերն ենք ստացել:
- Szamosu'jvar-Armenia-ի խմբ. Ստացել ենք միայն 3-դ Համարը:
- „ԱՐՇԱՆՈՅՄ“ին. 1—34 շեհը ստացել ամենեւին, իսկ ապրիլ 8-էջ յետոյ դադարեցրել էք մեզ լրագրի առաջումը:
- „ՃԱՂԻԿ“ին. Չեհը ստացել Թ. Թ. 1—7, 12, 23, 27, 116, 122—146, իսկ մայիս 1-էջ յետ ամենեւին:

ՄՏԱՑՈՒՆԺ ԳՐՔԵՐ

- Աւագ շարաթ Հայաստանեայց առաք. ս. եկեղեցւոյ. Նոր-Ջուղա 1895.
- Նր. Շահագիզ. Միքայէլ Ղ. Նալբանդեանց, կենս. Մոսկուա 1897.
- Կ. Բասմաշեան. Պսակ մը Փրիդրիխ Միւլլերի գերեզմանին վրայ. Վենետիկ 1898.
- Ղ. Տէր-Գրիգորեան. Շէյխ Ջաւադ. հրատ. «Աղբիւր-Տարազ»-ի Թիֆլիս 1899.
- Յարութիւն Թումանեան. Մեյլքե-Բէգլար. պատմ. պօէմա. Թիֆլիս 1899.
- 1900. Ընդարձակ օրացոյց Ազգային հիւանդանոցի Կ. Պօլիս. Զրիս. Թաղէոսեան. Բանաստեղծութիւններ, հեղինակի պատկերով և կենս. ակնարկով, հրատ. Ը. Գողթնի. Մ. 1899.
- II. Ростомашвили. Русско-грузинскій энциклопедическій словарь т. 1, 2, 3, 4. Тифлисъ 1898—1900.
- Արշակ Տէր-Միքէլեան. Հայաստանեայց ս. եկեղեցու քրիստոնէականը. Թիֆլիս 1900.
- Ն. Յարոյ. Բաց նամակ Թիֆլիսի Ներսիսեան Հայոց Հոգեւոր դպրոցի այժմեան հոգաբարձութեան. Թիֆլիս 1899.
- Յ. Ս. Էփրիկեան. Բնաշարհիկ բառարան. Վենետիկ 1900.